

Իտարանաղցի էջ 236) նկատուելու համար:

Իր մանկութեան շրջանին վրայ ծանօթութիւններ չկան: Միայն իր եղբորորդւոյն՝ Յակոբ քհյ. Կեսարացիի յիշատակարանէն (\*) գիտենք թէ հօրը անունն էր Եաղուպ ու մօրը՝ Վարդ խաթուն: Ունէր Պաղտատար և Խաւրպալ անուն եղբայրներ և Թուխտար անուն քոյր մը:

Իր հօրը անունով Եաղուպ ալ կոչուած է և հասակին բարձրութեան համար Երկայնահասակ (տե՛ս, Տրդատ եպս. Պալեան,

(\*) Յակոբ քհյ. Կեսարացիի յիշատակարանին իսկականը՝ այսինքն իր ձեռագիրը կը գտնուի Վիեննայի Մխիթարեանց Մատենադարանը (թ. 574, 593): Օրինակ մըն ալ Ղալաթիա Ազգ. Մատենադարանին մէջ որմէ ընդօրինակելով Բարգէն Կաթողիկոս հրատարակած է (տե՛ս, Կոլոա Յովհաննէս պատրիարք, 1904, Վիեննա, էջ 78 - 80): Հաւանօրէն երրորդ օրինակ մը՝ — տարբերակներով — տեսած է Տրդատ եպս. Պալեան, որ զայն հրատարակած է (Հայ աշուղներ, հտ. Բ. էջ 203 - 208): Բարգէն Կաթողիկոս, ինչպէս կը տեսնուի, պակասաւոր հրատարակած է, վասնզի Կ. Պոլսոյ Ամեն. Տ. Մեսրոպ պատրիարքի արտօնութեամբ մեզի տրամադրուած նոր ընդօրինակութիւն մը աւելի ընդարձակ է քան այդ հրատարակուածը եւ ունի Տրդատ եպս.ի հրատարակածին բովանդակութիւնը:

Յակոբ քհյ. Կեսարացիի մասին տե՛ս ՀԱ. 1909, էջ 371 - 373 եւ Աղանունի եպս. Միաբանք եւ Այցելուք էջ 320 - 321: